

Ք ՈՒՐ Ք Ա Շ Ա Յ Ո Ց

Հին վաճառականութիւնն եւ վաճառականք

«Եւ յիւրիցիս առաջիկն ին սակաւք, եւ վերջիկն ին աւրաւք:» ԳԻՐՔ ՅՈՐԱՅ Ը. 7.

Ա.

1740—1800

ՔՈՒՐՔԻՈՑ նման գեղեցկադիր հաղորդական ու միջ-
նազգային երկիր մը՝ հին պատմական ժամանակներէ
հետէ ունեցած է մեծ կարեւորութիւն վաճառական, մա-
նաւանդ Միջերկրականի ու Սեւ ծովի ափանց վրայ,
ուր յոյն փիւնիկ ու եգիպտական գաղթականութիւնք ա-
ռեւտրած են յաջողապէս պատմական ատեններէ ի վեր:

Վերջին չորս հինգ դարերու միջոցին՝ հայե՛րն ալ
ցուցած են հոն կարեւո՛ր գործունէութիւն, մանաւանդ
ասիական հայերը, որ շատոնց նշանաւոր հանդիսացած են
ցամաքային վաճառականութեան մէջ. բայց մեր տեսու-
թիւնք չեն կրնար հասնիլ առ այժմ 150—160 տարիէն
անդին: Եւ արդէն մեր նկատած շրջանակն ալ այդ ժա-
մանակամիջոցն է միայն՝ իրրեւ մօտաւորագոյն կցորդ և
նախորդ արդի ժամանակաց առեւտրական գործառնու-
թեանց: